



CHILDREN
OF ARMENIA
FUND

Մամուլի հաղորդագրություն
25. 09. 2020 թ.

ՔՈԱՖ-ը շարունակում է պայքարը ՔՈՎԻԴ-19-ի հետևանքների դեմ

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի (**ՔՈԱՖ**) 10-րդ ամառային դրամահավաքին հանգանակված ամբողջ գումարը՝ **560,000 ԱՄՆ դոլար**, ուղղվել է Հայաստանի մարզերի **առողջապահական ենթակառուցվածքների** բարեկարգման գործին:

ՔՈԱՖ-ի «COVID արտակարգ ֆոնդի» այս գումարը կենսական աջակցություն է տրամադրում գյուղերի բժշկական հաստատություններին՝ բուժսարքավորումների, բժշկական պարագաների և մասնագիտական կարողությունների կատարելագործման տեսքով:

Առողջապահական առաջնային օղակի ուժեղացումը և բնակչության իրազեկման բարձրացումը անկյունաքարային նշանակություն ունեն վերաբացվող կրթօջախների պայմաններում համավարակի հնարավոր նոր ալիքը կանխելու հարցում:

2020 թ. համավարակի մարտահրավերները խմբագրեցին ՔՈԱՖ-ի ծրագրային ձևաչափերը: Հիմնադրամը առցանց հարթակ բերեց իր բոլոր ծրագրերը ինչպես գյուղական համայնքներում, այնպես էլ ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնում:

*«Մենք չենք կարող թույլ տալ, որ ՔՈՎԻԴ-19-ն ընդհատի այն ամենը, ինչ տարիների ընթացքում արել է ՔՈԱՖ-ը հայկական գյուղերի համար,- նշում է Ջարգացման գծով տնօրեն **Հայկ Բոյաջյանը**:- Մեր հետազոտությունները ցույց են տվել, որ ՔՈԱՖ ՍՄԱՐԹ-ի շահառու 26 գյուղերի երեխաների 41 տոկոսը համապատասխան սարքավորումներ և ինտերնետ կապ չունենալու պատճառով դուրս է մնացել հանրակրթության և ՔՈԱՖ-ի ուսումնական գործընթացներից»:*

Նոր ուսումնական տարվան ընդառաջ՝ ՔՈԱՖ-ը շահառու համայնքների սոցիալապես խոցելի երեխաների համար նախատեսում է պլանշետներ գնել, որպեսզի որակյալ կրթությունը մշտապես հասանելի լինի գյուղաբնակ երեխաներին՝ անկախ գտնվելու վայրից: Հենց այդ խնդրին արդյունավետ դիմակայելու համար ՔՈԱՖ-ը նախաձեռնել է **[«Back-to-School» ֆոնդիայթայթման արշավը](#)**:

*«Նվիրաբերությունը արշավին թույլ կտա ՔՈԱՖ-ի շահառու գյուղաբնակ երեխաներին օգտվել ուսման անընդհատության հիմնարար իրավունքից,- ասում է ՔՈԱՖ-ի Գյուղական ծրագրերի ղեկավար **Անահիտ Հակոբյանը**:- Սեպտեմբերի 22-ին մենք վերսկսել ենք դեմ առ դեմ կրթական ծրագրերը ինչպես գյուղերի մեր շահառու դպրոցներում, այնպես էլ **Լոռու մարզի ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնում**»:*



CHILDREN
OF ARMENIA
FUND

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Պեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 64 համայնքների ավելի քան 107,000 բնակիչները:

2015թ. սկսած՝ ՔՈԱՖ-ը մշակել և իրագործում է նոր տեսլական՝ ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովում գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՍՄԱՐԹ-ը կդառնա զարգացման օրինակելի մոդել և կկրկնօրինակվի Հայաստանի այլ մարզերում և համայնքներում:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին: